Շար.
1. Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ
Այսօր ի նոր գերեզմանէն:

Երևեալ լոյս յարութեան, աւետիս,
Ի խաւարի ստուերաց մահու:
Աւետիս:
Յարեաւ Քրիստոս, աւետիս:

2. Երփնազարդ հոգվոցըն տունկք
Կանանչացան կենդանութեամբ:

3. Ոենական լուսոյ սաղարթք
Ի հոգեւոր գարնան փթթեալք:

4. Սիրով մեռեալըն վասըն մեր
Յարոյց ընդ իւր լանկեալ բնութիւնս:

(1.Նոր ծաղիկ պայծառորեն երևաց
Այսօր նոր գերեզմանից:

Հարության լույս երևաց, ավետիս,
Մահվան ստվերների խավարում:
Ավետիս:

Քրիստոսն հարություն առավ, ավետիս:

2. Հոգիների երփներանգ տունկերը
Կանաչեցին կենդանությամբ:

3. Լույսի սաղարթները
Հոգևոր գարնան մեջ փթթեցին:

4. Մեզ համար սիրով մահացածը
Իր հետ հարություն տվեց մեռած բնությանը:)